ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի սեպտեմբերի 25-29-ը Լատվիա /Ռիգա/ կատարած գործուղման արդյունքների մասին

1.Անունը,ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Լատվիայի Հանրապետություն (Ռիգա), 2023թ. սեպտեմբերի 25-29-ը

3.Հրավիրող կողմը՝

Եվրամիության վիճակագրական ծառայություն (Եվրոստատ)

4.Գործուղման նպատակը՝

Մասնակցել Եվրոպական հարևանության քաղաքականության Արևելյան և Կենտրոնական Ասիայի երկրների համար «Վիճակագրական համակարգերի մոդեռնիզացում» խորագրով Բարձր մակարդակի սեմինարին:

Սեմինարն ուղղված էր Ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին Եվրոպական հարևանության քաղաքականության, Արևելյան և Կենտրոնական Ասիայի երկրներից՝ ներկայացնելու վերջին զարգացումները Եվրոստատում, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայում (EFTA) և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովում (UNECE), ինչպես նաև Եվրոպական հարևանության քաղաքականության Արևելյան Գործընկերության և Կենտրոնական Ասիայի Երկրներում:

Սեմինարի հիմնական նպատակն էր քննարկել ազգային վիճակագրական համակարգերի մոդեռնիզացման խնդիրները և զարգացման հեռանկարները:

5.Քննարկված թեմաները՝

Բարձր մակարդակի սեմինարին քննարկվեցին հետևյալ թեմաները. վերջին զարգացումները Եվրոստատում, EFTA-ում և UNECE-ում, վերջին զարգացումները Եվրոպական հարևանության քաղաքականության Արևելյան Գործընկերության և Կենտրոնական Ասիայի Երկրներում, վիճակագրական աշխատանքների կազմակերպման փոփոխություն, ոլորտից մինչև գործընթացի վրա հիմնված կազմակերպում, SS ինտեգրում և տվյալների փոխանակում ազգային վիճակագրական համակարգերում, վիճակագրական համակարգերի

մոդեռնիզացում, վարչական տվյալներն արդի դարաշրջանում, մասնավոր տվյալների դերը ժամանակակից պաշտոնական վիճակագրությունում, բազմաղբյուր վիճակագրություն և տվյալների գիտություն, նորարարությունը պաշտոնական վիճակագրությունում, ինչպես կազմակերպել և դյուրինացնել նորարարությունը, տվյալների նոր աղբյուրներ և մշակման նոր տեխնիկա, փորձարարական վիճակագրություն, տարածման և հաղորդակցման նոր ռազմավարություններ, ժամանակակից և զարգացող վիճակագրական աշխատանքի համար ուսուցում և հմտությունների զարգացում, դասընթաց՝ ժամանակակից վիճակագիրների հմտությունները զարգացնելու համար, Եվրոստատի, EFTA-ի և UNECE-ի վերապատրաստման ծրագրերը:
Երկրների կողմից ներկայացվեցին շնորհանդեսներ հատուկ մոդեռնիզացման գործողությունների վերաբերյալ՝ շեշտը դնելով մարտահրավերների, քաղված դասերի և հետագա քայլերի վրա:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանը սեմինարին ներկայացրեց հաշվետվություն ազգային վիճակագրական համակարգի ամենակարևոր վերջին զարգացումների վերաբերյալ և «Մոդեռնիզացման ստանդարտները և մոդելները Արմստատում» խորագրով շնորհանդես:
Արմստատի գործունեությունն ազգային վիճակագրական համակարգի մոդեռնիզացման բնագավառում ուղղված է լավագույն մեթոդների, տեխնոլոգիաների և կազմակերպման լավագույն եղանակների կիրառմանը և պաշտոնական վիճակագրության արդիականացմանն աջակցելու միասնական ստանդարտների, մոդելների և գործիքների ներդրմանը:
«Մոդեռնիզացման ստանդարտները և մոդելները Արմստատում» խորագրով շնորհանդեսի շրջանակում ներկայացվել է Արմստատի կողմից մոդեռնիզացմանն ուղղված աշխատանքի վերաբերյալ ստորև բերված տեղեկատվությունը.
2011-2013թթ.՝ 139 վիճակագրական արտադրանքների որակի հռչակագրերի մշակում (https://armstat.am/am/?nid=545),
2014-2015թթ.՝ Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի (GSBPM) հենքով 139 վիճակագրական արտադրանքների վիճակագրական գործընթացներ փաստաթղթավորում (https://armstat.am/am/?nid=373),
2017-2018թթ.՝ «լողավազանի մոդելով» 139 վիճակագրական արտադրանքների վիճակագրական գործընթացների գծապատկերներով տեսապատկերավորման աշխատանքի իրականացում (https://www.armstat.am/am/?nid=672):

2019-2021թթ.՝ ԵՄ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքի (SIMS) ներդրում և դրա հիման վրա որակի հաշվետվությունների կազմում: SIMS-ի համաձայն վիճակագրական արտադրանքների համար սպառողին (Եվրո SDMX

(վիճակագրական տվյալների և մեթատվյալների փոխանակում) մեթատվյալների կառուցվածք (ESMS))/(https://armstat.am/am/?nid=836) և արտադրողին (Որակի հաշվետվությունների կառուցվածքի համար Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտ (ESQRS))/(https://armstat.am/am/?nid=837) ուղղված որակի հաշվետվությունների ներդրում:

Վիճակագրական արտադրանքների համար Մեթատվյալներ (ESMS) և Որակի հաշվետվություններ (ESQRS) ձևաչափերով մոդուլների, ինչպես նաև յուրաքանչյուր արտադրանքի համար՝ xml ձևաչափով SDMX 2.1 ստանդարտի երկու ֆայլի՝ մեթատվյալների կառուցվածքի սահմանում (MSD) և մեթատվյալներ (Data) մշակում:

2022-2023թթ.՝ Վիճակագրական կազմակերպությունների համար Ընդհանուր գործունեության մոդելի (GAMSO) ներդրում (https://armstat.am/am/?nid=909):

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Սեմինարը օգտակար էր վարչական տվյալների, մասնավոր տվյալների, տվյալների նոր աղբյուրների օգտագործման տեսանկյունից ժամանակակից պաշտոնական վիճակագրությունում:

Սեմինարին հատուկ ընդգծվեց բազմաղբյուր վիճակագրության, նորարարության և տվյալների գիտության կարևորությունը պաշտոնական վիճակագրությունում:

Հարց բարձրացվեց ժամանակակից և զարգացող վիճակագրական աշխատանքի համար ուսուցման և հմտությունների զարգացման ուղղությամբ տեխնիկական օժանդակության անհրաժեշտության վերաբերյալ:

Հայաստանը դիմեց Եվրոստատին, EFTA-ին և UNECE-ին աջակցություն ցուցաբերելու խնդրանքով հաջորդ հետևյալ մոդելների ներդրման ուղղությամբ. Ընդհանուր վիճակագրական տեղեկատվության մոդել (GSIM) և Ընդհանուր վիճակագրական արտադրության ճարտարապետություն (CSPA):

Ներկայացնելով իր հարուստ փորձն արտաքին փորձագետների կողմից իրականացված գնահատումների վերաբերյալ, Հայաստանը կրկին դիմեց Եվրոստատին Արմստատի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության հաջորդ փորձագիտական գնահատումն անցկացնելու խնդրանքով:

Խնդրո առարկա թեմայի շուրջ Արմստատում տեղի ունեցած գնահատումների վերաբերյալ հաշվետվությունները զետեղված են կայքում (https://www.armstat.am/am/?nid=73):

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մասնակցությունը սեմինարին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին՝ ծանոթանալու վերջին զագացումներին Եվրոպական Վիճակագրական Համակարգում, քննարկելու ազգային վիճակագրական համակարգերի մոդեռնիզացման գործիքները, վարչական տվյալների, տվյալների նոր աղբյուրների և ոչ ավանդական տվյալների աղբյուրների (մեծ տվյալներ, աշխարհատարածական տեղեկատվություն) օգտագործման հետ կապված մարտահրավերները, աշխատանքի նոր պրոֆիլներ (տվյալների վերլուծաբան, տվյալների գիտնական, տվյալների ճարտարագետ) մշակելու հետ կապված խնդիրները, կիսելու իրենց փորձերը, ինչպես նաև քննարկելու գործողություններն ուղղված ազգային վիճակագրական համակարգերի հետագա մոդեռնիզացմանը:
Սեմինարի ընթացքում ձեռք բերված գիտելիքների հենքով Արմստատը կշարունակի իր գործունեությունն ուղղված համակարգի մոդեռնիզացման նոր գործիքակազմի ներդրմանը, վիճակագրական նպատակների համար վարչական տվյալների օգտագործման ընդլայնմանը և բազմաղբյուր վիճակագրության ձևավորմանը:

9.Ստորագրությունը, ամսաթիվը՝

<< վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյան

02.10.23թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - ՀՀ վիճակագրական կոմիտե

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը – Հայաստանի Հանրապետության Վարչապետի 11.08.23թ. թիվ 831-Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ստեփան Մնացականյան – Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը - Լատվիայի Հանրապետություն (Ռիգա)

5. Գործուղման ժամկետները՝ 2023թ. սեպտեմբերի 25-29-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը - Եվրամիության վիճակագրական ծառայություն (Եվրոստատ)

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)

		1	2	3	...	
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

Գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյան

02.10.2023թ.